

տալ յառաջդիմութեան, արդարութեան և ազատութեան, կրնա՞յ տակաւին յուսալ: Երկիրը չէ, և չի կրնար ըլլալ ուրեմն նպատակը մարդուն, իտեալը քրիստոնեային, այլ միայն բեմը իր գործունէութեան, այն վայրը, ուր պիտի պատրաստէ ան իր հոգեւոր ապագան, մահուան ճամբաներուն մէջ չկորսուելու համար:

Կեանքը աւելի քան ինչ որ կը կարծենք առհասարակ, ֆիզիքական, աշխարհային կեանքէն աւելի բարձր և մօտ Աստուծոյ, կայ հոգեկան կեանքը, որ չի սահմանափակուիր շնչելու, մտածելու և գործելու մէջ միայն, մարդը լոկ հացով չ'ապրիր, և ոչ ալ հացին համար: Աստուած մեր էութեան բարձրագոյն սահմանին վրայ է, Անոր հասնելով իր լրութեան կը հասնի մեր մարդկայինը:

Մեծ Պահքի այս օրերուն, պէտք է մեր մտածումին առարկան ըլլայ մեր բարձրագոյն ճակատագրին հոգը: Մեծ Պահքը դադրած է այլեւս աղ ու հացի շրջան մը ըլլալէ, սակայն անիկա անհրաժեշտաբար պարտի ըլլալ առօրեային մէջ մեզմէ խուսափած մեր բարձրագոյն էութեան, մեր ապագայ կեանքին հայեցողութեան շրջանը: Ժամանակամիջոցը, ուր մենք կը վերագտնենք մեր միւս մասը եւս, ամբողջացնելու համար կեանքը: Մեծ Պահքը այս մտածումին վերապրումին շրջանն է, տարուան այն անկիւնադարձը՝ ուր մեր մէջ պէտք է հաշտուի հոգեկանն ու մարմնականը, շինելու կատարեալ մարդը ի փառս Ամենասուրբ Երրորդութեան, որ է օրհնեալ յաւիտեանս, ամէն:

Մարտ-Ապրիլ, 1941

Լ Ա Պ Տ Ե Ր Ի Ս

Եղիվարդ

Սենեակիս մէջ՝ Լապտերը վարդ մ'է ճերմակ,
Որ իր թիթեռն խաւառին դէմ կը բանայ,
Չերթ հատիկներ մանեակի մը մարգարիտ,
Իր պսակէն կ'իյնան ցօլքեր յատակին:

Սենեակիս մէջ լապտերս լուսին մ'է ճերմակ,
Խորն հայելոյն մէջ բացուող անհուն նունուֆար,
Իր լոյսին մէջ որքան դժուար է գիտնալ,
Պահը օրուան, պահը սատափ ու արծաթ:

Լոյսն լապտերիս գանգուրներու է նրման
Բարձին վրայ ննջող խարտեաշ աղջկան,
Ժպտուն լապտեր նայուածքներդ տաք ու բարի,
Իրիկուններս կ'ընեն ուրախ ու Կիրակի:

